ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 71 Ա — ք.Արտաշատ

„22" մարտի 2024թ.

«ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ «ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N194 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ 37-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թվականի հունվարի 5-ի «Վեդու բժշկական կենտրոն» և «Մասիս բժշկական կենտրոն » փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալները նվազեցնելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին անշարժ գույք ամրացնելու եվ հայաստանի հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առեվտրային կազմակերպությանն անժամկետ եվ անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին N 6-Ա որոշումը

Որոշում եմ՝

1. «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետոմսերի մարման միջոցով նվազեցնել 17400000(տասնյոթ միլիոն չորս հարյուր հազար)դրամով:

2.Հաստատել «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2020թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 249 որոշմամբ հաստատված

«Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 114950000 (մեկ հարյուր տասնչորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար)դրամ, որը կազմում է 2299(երկու հազար երկու հարյուր ինսունինը) հատ 50000(հիսուն հազար) դրամ անվանական արժեքով հասարակ(սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 2299 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:
•Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3.Հանձնարարել . «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արարատի մարզպետի 2023թվականի հուլիսի 26-ի «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու եվ «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին N194 որոշումը:

Восстановимая подпись

X

Պարտականությունները կատարող՝ Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 Ա.Նազարեթյան